«ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՈՒ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՊՈՂՈՍՅԱՆ
Փաստաբան, Բոննի համալսարանի ասպիրանտ

DOI: 10.63925/18294847-2026.blj22-12

1. ***Ներածություն.***

Սահմանադրական դատարանի հետ առնչվող իրավաբանները հաճախ են բախվում Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննությունը մերժելուն, ինչը Սահմանադրական դատարանը շատ դեպքերում հիմնավորում է հետևյալ արտահայտությամբ.

«Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը, համաձայն որի, ի թիվս այլնի, դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել, և ինչ ***անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև բավարար հիմնավորումներ:*** *Ուստի՝ այն հանգամանքով պայմանավորված, որ վերոնշյալ պահանջները սույն դիմումում պահպանված չեն, Սահմանադրական դատարանի գնահատմամբ սույն դիմումը վերոնշյալ հիմնավորումներով* ***ակնհայտ անհիմն է:»***[1] (մգեցումներն ըստ Սահմանադրական դատարանի):

[1] Տե՛ս օրինակ՝ Սահմանադրական դատարանի 12.07.2022 թ. ՍԴԱՈ – 125 աշխատակարգային որոշումը: Այս չափանիշն առաջին անգամ սահմանվել է ՍԴՈ – 839 որոշմամբ, որին առանձին անդրադարձ կկատարվի ստորև՝ բաժին II.:

Սույն վերլուծության առջև դրված խնդիրն է բացահայտել «անմիջական պատճառահետևանքային կապ» բառակապակցության բովանդակությունը, որի շրջանակներում պետք է մասամբ անդրադարձ կատարվի նաև Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումի թույլատրելիության ու հիմնավորվածության չափանիշներին: Արդյունքում ցույց կտրվի, որ նորմատիվ մակարդակում «պատճառահետևանքային կապ»[2] հասկացությունը տեղ չունի և կառաջարկվի անհատական դիմումի թույլատրելիության վերաբերելի, ավելի կիրառական ու դոգմատիկ առումով համոզիչ մոտեցում:

2. <u>Հիմնական հետազոտություն.</u>

I. «Անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացությունը

Նախևառաջ փորձենք հասկանալ, թե ինչ իմաստ ունեն «պատճառահետևանքային կապ» և «անմիջական» եզրույթները: «Պատճառահետևանքային» եզրույթը՝ որպես ածական, ըստ Է. Աղայանի, արտահայտում է «Պատճառի և հետևանքի փոխադարձ կապ՝ պայմանավորվածություն ցույց տվող՝ արտահայտող» [1, էջ 1192] իմաստը: Այս առումով, երբ Սահմանադրական դատարանը խոսում է «օրինադրույթի հակասահմանադրականության և հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի» մասին, առաջին հայացքից կարող ենք ենթադրել, որ Սահմանադրական դատարանը նկատի ունի այն հանգամանքը, որ օրենքի հակասահմանադրականությունը *պատճառ է* անձի հիմնական իրավունքի խախտման՝ որպես *հետևանքի* համար: Այսինքն՝ եթե անձի հիմնական իրավունքը խախտվել է (հետևանքը վրա է հասել) ոչ թե օրենքի հակասահմանադրականության պատճառով (պատճառ), այլ ուրիշ հանգամանքներով (պատճառներով) պայմանավորված, ապա Սահմանադրական դատարանն անհատական դիմումով գործի քննությունը կմերժի՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու պատճառով: Այդ դեպքում օրենքի հակասահմանադրականությունն «անմիջական» պատճառ չի լինի հիմնական իրավունքի խախտման (հետևանքի) համար:

[2] «Նորմատիվային մակարդակում պատճառահետևանքային կապ» ասելով նկատի ունենք երկու կամ ավելի նորմերի միջև (օրինակ՝ Սահմանադրություն, սահմանադրական օրենք, օրենք, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ) պատճառահետևանքային կապը [որի գոյությունը սույն հոդվածում, սկզբունքորեն, հերքվում է]:

«Անմիջական» տերմինը, ըստ Է. Աղայանի, արտահայտում է «առանց միջնորդավորության, ուղղակի» իմաստը [1, էջ 72]:

Առաջին հայացքից տրամաբանական թվացող այս մոտեցումը, սակայն, առաջ է բերում որոշ խնդիրներ և, ինչպես ցույց կտրվի ստորև, պրակտիկայում կարող է հանգեցնել նրան, որ Սահմանադրական դատարանը գործերը քննի ոչ թե Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով կանխորոշված թույլատրելիության չափանիշների հիման վրա, այլ ըստ ցանկության: Հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանը պահանջում է նաև *անմիջական* պատճառահետևանքային կապի առկայություն, ինչպես նաև՝ պատճառահետևանքային կապի առկայության բավարար չափով իրավաբանորեն հիմնավորում դիմող կողմից, խնդիրն ավելի է սրվում:

Մինչև (սահմանադրական) դատավարության իրավունքում «(անմիջական) պատճառահետևանքային կապ» հասկացությանն անդրադառնալն արդարացված կլինի հակիրճ անդրադարձ կատարել այդ հասկացության՝ փիլիսոփայության, ֆիզիկայի ոլորտներում և այնուհետ իրավունքի տարբեր այլ ճյուղերում գործածությանը և դրա սահմանմանը, որին կհաջորդի սահմանադրական իրավունքում դրա կիրառելիության նպատակահարմարության հարցի քննարկումը: Այս մոտեցման արդարացվածությունն այն է, որ, ըստ էության, պատճառահետևանքային կապի մասին խոսել են դեռևս հին հունական փիլիսոփայությունում, այնուհետ՝ դասական ֆիզիկայում, ինչպես նաև՝ իրավագիտությունում: Ուստի որոշակի պատմական-խրոնոլոգիական մոտեցումը թեմայի ըմբռնման համար իմաստալից կլինի:

1. Պատճառահետևանքային կապը փիլիսոփայությունում

Արիստոտելը պնդում է, որ ինչ-որ բան հասկանալ մենք ի վիճակի ենք միայն այն դեպքում, երբ հասկանում ենք դրա «պատճառը». «մենք չենք պնդում, որ ինչ-որ բան գիտենք, քանի դեռ չենք հասկացել դրա ինչուն»[3]: Նա տարբերակում է «պատճառի» չորս տեսակ[4]. նյութական պատճառ (causa materialis), ձևական պատճառ (causa formalis), ազդեցության պատճառ (causa efficiens) և նպատակի պատճառ (causa finalis):

[3] Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel. Գիրքն ամբողջությամբ կարելի է կարդալ՝ բացելով հետևյալ հղումը http://www.zeno.org/Philosophie/M/Aristoteles/Physik/2.+Buch/3.+Capitel (վերջին մուտք՝ 29.05.2024թ.)
[4] Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.

«Նյութական պատճառ» ասելով Արիստոտելը հասկանում է արդեն իսկ գոյություն ունեցող նյութը՝ որպես նոր ստեղծվող իրի *պատճառ* (օրինակ՝ կավը՝ պատկերասյունի համար, արծաթը՝ գավաթի համար)[5]: «Ձևական պատճառի» ներքո Արիստոտելը հասկանում է իրի էությունը, որը պատասխանում է «ինչը» հարցին[6]: Այլ կերպ ասած՝ ի՞նչն է իրը դարձնում այնպիսին, ինչպիսին որ այն կա, և ինչո՞վ է այն տարբերվում այլ իրերից: Որպես օրինակ՝ Արիստոտելը նշում է 2 և 3 թվերի հարաբերակցությունն օկտավաների համար[7]: Կարելի է ավելի պարզ օրինակ բերել բրոնզե մարդու կերպարանքով արձանի վերաբերյալ: Դրա նյութական պատճառը բրոնզն է, իսկ ձևի պատճառը՝ մարդը, որի կերպարանքով վարպետն ստեղծել է արձանը: Արձանն իր այդ «ձևական պատճառով» է տարբերվում այլ բրոնզե բեկորներից:

Ազդեցության պատճառն այն է, ինչն առաջինն է ազդում իրի վրա, օրինակ՝ արձանի համար «ազդեցության պատճառ» է քանդակագործը, ով քանդակում է արձանը: Նպատակի պատճառը հե՛նց այն նպատակի մեջ է, որի համար տեղի է ունենում ինչ-որ բան: Օրինակ՝ երբ անձը զբոսնում է, մենք հարցնում ենք՝ ինչի՞ համար, որին նա կարող է պատասխանել՝ առողջության: Այսինքն՝ զբոսանքը (նպատակային) պատճառ է առողջության համար[8]:

Նախասոկրատեսյան փիլիսոփաներից Հերակլիտի հետևյալ պնդումը Հանս Քելզենին հիմք է տվել ենթադրելու, որ այն պատճառահետևանքային կապի օրենքի առաջին ձևակերպումներից մեկն է [13, էջ 328].

«Եթե արևը չպահպանի իր համար կանխորոշված ուղղությունը, ապա Էրինիաները՝ արդարության օգնականների օգնականները, նրան ճիշտ ուղի կվերադարձնեն»[9]:

Ըստ Քելզենի՝ պատճառահետևանքային կապի վերաբերյալ այս նախադասությունը, սակայն, նկարագրում է ոչ թե բնագիտական իմաստով անհրաժեշտություն, այլ

[5] Օրինակները՝ ըստ Արիստոտելի, տե՛ս Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Օրինակը՝ ըստ Արիստոտելի, տե՛ս Aristoteles, Physik, 2. Buch, 3. Capitel.
[9] Այս մեջբերումը վերցվել է Հանս Քելզենի Kausalität und Zurechnung, in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, հոդվածից: Այլ աղբյուրում, մասնավորապես՝ *Gammelli Marciano Laura-ի* „Die Vorsokratiker. Band 1: Thales, Anaximander, Anaximenes, Pythagoras und die pythagoreer, Xenophanes, Heraklit“ աշխատանքում, Հերակլիտի համապատասխան պնդումն ունի հետևյալ շարադրանքը. «Արևն իր չափերը չի անցնի, այլապես Էրինիաները՝ արդարության [հեղ. իրավունքի] օգնականները, կգտնեն նրան», տե՛ս նույն աշխատանքում, էջ 315:

իրավական իմաստով այն, որ եթե արևը դուրս գա սահմանված ուղեծրից (խախտի օրենքը), ապա Էրինիաները նրան կբռնեն ու կարգի կբերեն [13, էջ 241-242]:

Էմանուել Կանտը պնդում է, որ մեր գիտակցությունը կարողանում է զուտ ժամանակի մեջ որոշել մի իրադարձության նախորդելը կամ հաջորդելը մեկ այլ իրադարձությանը [12, էջ 241-242]: Եթե դիտարկենք չոր և թաց փողոցները, ապա առանձին-առանձին վերցրած՝ մենք չենք կարող միանշանակ պնդել, թե որ վիճակն է նախորդել կամ հաջորդել մյուսին: Որպեսզի մենք կարողանանք հասկանալ այս երկու վիճակների հաջորդականությունը ժամանակի մեջ, մեզ անհրաժեշտ է պարզել, թե որ իրավիճակն է անհրաժեշտաբար նախորդել մյուսին[10]:

Այսպիսով՝ պատճառահետևանքային կապի սկզբունքի միջոցով է միայն հնարավոր հասկանալ այդ երկու իրավիճակների փոխհարաբերակցությունը և, առհասարակ, մի իրավիճակից մյուս իրավիճակի փոփոխությունը[11]:

Դեվիդ Հյումը պատճառահետևանքային կապը սահմանում է որպես *«իր, որին հաջորդում է այլ իր, ընդ որում՝ բոլոր իրերին, որոնք առաջինին նման են, հաջորդում են իրեր, որոնք նման են երկրորդին, կամ եթե առաջինը գոյություն չունենար, երկրորդը երբևէ ի հայտ չէր գա»*[12] *[10, էջ 87]:* Հյումը պնդում է, որ ռացիոնալ կերպով առհասարակ հնարավոր չէ հիմնավորել որևէ պատճառահետևանքային կապի առկայություն, քանի որ պատճառահետևանքային կապի գոյությունը **պայմանավորված է զուտ մեր (կյանքի) փորձով** [10, էջ 116]:

Վերոնշյալը Հյումը հիմնավորում է հետևյալով.

«Մենք ասում ենք, օրինակ, որ լարի այսպիսի տատանումը պատճառ է այս տոնի առաջացման համար: Բայց ի՞նչ նկատի ունենք այս պնդմամբ: Կա՛մ դրանով մենք նկատի ունենք, որ հե՛նց այդ տատանմանը հաջորդում է այդ տոնը, ու որ բոլոր նման տատանումներին հաջորդել են նման տոներ, կա՛մ էլ նկատի ունենք, որ այս

[10] Նույն աշխատանքում (B 234):

[11] Մոտավոր այս իմաստով է Կանտի՝ պատճառահետևանքային կապի սկզբունքն ամփոփում է Otfired Höffe-ն, Immanuel Kant, 8. Auflage 2014, էջ 134:

[12] Տե՛ս David Hume, Eine Untersuchung über den menschlichen Verstand, Felix Meiner Verlag Hamburg, 2., korrigierte Auflage, էջ 87; Համեմատել նաև անգլերեն տեքստը՝ Tom L. Beauchamp, David Fate Norton, M. A. Stewart (General Editors): David Hume, A Treatise of Human Nature, Volume 1,The Clarendon Edition of the Works of David Hume, Oxford 2006, էջ 114 (կողակետ 31). *"An object precedent and contiguous to another, and where all the objects resembling the former are placed in like relations of precedency and contiguity to those objects, that resemble the latter."*

տատանմանը հաջորդում է այս տոնը, և որ առաջինի [տատանման] ի հայտ գալու պես մարդու միտքն առաջ է ընկնում ու ուղղակիորեն պատկերացում կազմում երկրորդի [տոնի] մասին [10, էջ 88]»:

Այս օրինակով Հյումը փորձում է ցույց տալ, որ պատճառի և հետևանքի (ազդեցության) վերաբերյալ պատկերացումները հիմնված են զուտ էմպիրիկ փորձի վրա, բայց այն (պատճառահետևանքային կապը), ըստ էության, հնարավոր չէ ռացիոնալ կերպով, զուտ տրամաբանորեն բացատրել: Այն, որ անցյալում տեղի ունեցած մի իրադարձության միշտ հաջորդել է որոշակի այլ իրադարձություն, տրամաբանության կանոնների շրջանակներում դեռ մեզ թույլ չի տալիս ենթադրել, որ ապագայում ևս նման իրադարձությանն *անհրաժեշտաբար* կհաջորդի այդպիսի իրադարձություն:

Ըստ էության, Հյումը առհասարակ կասկածի տակ է դնում պատճառահետևանքային կապի առկայության ռացիոնալ հիմնավորումը, որը, կարելի է ասել, ժամանակակից քվանտային ֆիզիկայում հաստատվել է:

2. Պատճառահետևանքային կապը քվանտային ֆիզիկայում

Ինչպես տեսանք վերոգրյալում, պատճառահետևանքային կապի սկզբունքը ենթադրում է, որ մի վիճակին անհրաժեշտաբար նախորդել է մեկ այլ վիճակ, որից առաջացել է երկրորդը: Այլ կերպ ասած՝ եթե առկա է x վիճակը, դրան անհրաժեշտաբար հաջորդելու է y վիճակը: Այդ «անհրաժեշտությունը» հե՛նց պատճառահետևանքային կապ կոչվածն է: Այս կոնցեպտը համահունչ է դասական ֆիզիկայի մոտեցումներին:

Վերը նկարագրված իրավիճակը կտրուկ փոխվում է քվանտային ֆիզիկայում, որով առավելապես բացատրվում են (ի տարբերություն դասական ֆիզիկայի, որը գործ ունի մակրո[13] աշխարհի հետ) միկրո[14] աշխարհի երևույթները: Ժամանակակից քվանտային ֆիզիկան բացահայտել է, որ որևէ ֆիզիկական մեծություն չափելիս մենք չենք կարող կանխատեսել ստացվող արդյունքը, այլ առավելագույնը մենք կարող ենք խոսել, թե ինչ *հավանականությամբ* ինչ արժեքներ են ստացվում [7, էջ 15-16]: Նշվածի կոնտեքստում հետաքրքրաշարժ է, որ միկրոմասնիկի *վիճակը* հստակ ֆիզիկական արժեքներ ունեցող

[13] «Մակրո» ասելիս նկատի ունենք խոշոր առարկաների՝ մեծությունների հետ կապված (համեմատի՝ Է. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», էջ 956, Երևան 1976):

[14] «Միկրո» ասելիս, ի հակադրություն «մակրո» եզրույթի, նկատի ունենք շատ փոքր մեծություններ, օրինակ՝ էլեկտրոններ:

վիճակների վերադրումն է («superposition») [18, էջ 300]: Այսինքն՝ քվանտային ֆիզիկայում մասնիկը կարող է **միաժամանակ** գտնվել տարբեր վիճակներում: Նման պայմաններում անմիջական պատճառահետևանքային կապի առկայության մասին խոսելը ճիշտ չէ: Ֆիզիկական վիճակի իմացությունը չի կանխորոշում ֆիզիկական մեծության չափման արդյունքը: Ստացվում է, որ քվանտային ֆիզիկայի աշխարհում մեզ դասական ֆիզիկայից հայտնի պատճառահետևանքային կապի սկզբունքը չի գործում: Ըստ այդմ՝ քվանտային ֆիզիկայում խոսքն այլևս ոչ թե դասական իմաստով պատճառահետևանքային կապերի մասին է, այլ՝ հավանականությունների [17, էջ 290]:

20-րդ դարի սկզբների այս բացահայտումը, կարելի է ասել, գլխիվայր շրջել է նաև փիլիսոփայության շրջանակներում քննարկվող «պատճառահետևանքային կապի» սկզբունքը, քանի որ եթե մինչ այդ բոլորի պատկերացումներում հստակ էր, որ եթե կա հետևանք, կա նաև պատճառը և՝ հակառակը, ապա այժմ այլևս հնարավոր չէ նման պնդում անել: Սա ամենևին չի նշանակում, որ մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները հնարավոր չէ բացատրել պատճառահետևանքային կապի կոնցեպտով, բայց մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ այն այլևս բացարձակ չէ, և առնվազն միկրո մակարդակում, որը մակրո մակարդակի մաս է կազմում, այս սկզբունքն այլևս չի գործում:

3. «Պատճառահետևանքային կապի» սահմանումն իրավունքի տարբեր ճյուղերում

ա. Քրեական իրավունք

Իրավագիտության մեջ ավելի տարածված է պատճառահետևանքային կապի մասին խոսել քրեական և քաղաքացիական իրավունքում: Քրեական իրավունքի շրջանակներում, որպես կանոն, քննարկվում է ակտիվ գործողության ու վրա հասած հետևանքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը: Քրեական իրավունքի շրջանակներում քննարկվում են պատճառահետևանքային կապի՝ համապատասխանության տեսությունը («condition-sine-qua-non» = պայման, առանց որի), ադեկվատության տեսությունը[15], կարևորության

[15] Այս տեսությունը ենթադրում է, որ ոչ բոլոր գործողություններն են պատճառական արդյունքի համար, այլ միայն նրանք, որոնց պարագայում որոշակի իրատեսական հավանականություն կա, որ արդյունքը վրա կհասնի. Տե՛ս *Rudolf Rengier*, Strafrecht Allgemeiner Teil, 14. Auflage 2022, էջ 76-77, կողակետ 9 (օրինակ՝ եթե Ա.-ն Բ.-ին համոզում է զբոսնել անտառում՝ հույսով, որ կայծակը կհարվածի և կսպանի Բ.-

տեսությունը[16] [20, էջ 475-476, կողակետ 43] և օրինաչափ պայմանի ուսմունքը[17] [6, էջ 77, կողակետ 226, 221]:

Համապատասխանության տեսությունը սահմանում է, որ հանցակազմի համար նշանակություն ունեցող ցանկացած գործողություն վրա հասած արդյունքի համար պատճառական է, եթե առանց այդ գործողության կատարման (պայման) արդյունքը վրա չէր հասնի [5, էջ 19 (մասնավորապես՝ էջ 20)]: Ըստ այդմ՝ եթե Ա.-ն կրակում է Բ.-ի վրա, և վերջինս մահանում է կրակոցից, ապա միանշանակ կարելի է պնդել, որի Ա.-ի կրակոցի (պայման) և Բ.-ի մահվան (արդյունք) միջև առկա է պատճառահետևանքային կապ: Վերացական ասած՝ համապատասխանության տեսության շրջանակներում արդյունքի համար պատճառական է ցանկացած պայման, առանց որի հնարավոր չէր լինի, որ այդ կոնկրետ արդյունքը վրա հասներ [6, էջ 78, կողակետ 222]:

Հաշվի առնելով, որ վերոգրյալ բոլոր տեսությունները քննարկվում են քրեական իրավունքում, այստեղ նպատակահարմար չենք գտնում անդրադարձ կատարել բոլոր տեսություններին առանձին ու մանրամասն կերպով: Սույն վերլուծության շրջանակներում առանցքային է, սակայն, այն փաստի արձանագրումը, որ վերոգրյալ բոլոր տեսություններն առաջադրվում են, որպեսզի հնարավոր լինի պարզել՝ *արդյո՞ք* ***իրական աշխարհում*** *կատարված գործողությունը/ցուցաբերված անգործությունը գտնվում է պատճառահետևանքային կապի մեջ վրա հասած արդյունքի հետ, թե՝ ոչ:* Այսինքն՝ պատճառահետևանքային կապ հասկացությունը քրեական իրավունքում կիրառվում է, որպեսզի բացահայտվի մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը:

ին, ապա նույնիսկ հենց այդ սցենարը տեղի ունենալու դեպքում ադեկվատության տեսությունը կբացառի պատճառահետևանքային կապը, քանի որ իրատեսական հավանականություն առկա չէ, որ անձը անտառում զբոսնելիս կշանթահարվի):

[16] Այս տեսությունը, որն ըստ էության լուծում է արարքի վերագրելի լինելու խնդիրը, ի լրում ադեկվատության տեսության, պահանջում է, որպեսզի ամեն հանցակազմ լույսի ներքո դիտարկվի կոնկրետ գործողությունը, և միայն դրա նպատակային մեկնաբանության միջոցով պարզվի, որքանով էր կարևոր գործողությունը հանցակազմի իրականացման համար:

[17] Այս տեսությունը ելնում է այն գաղափարից, որ գործողության և արդյունքի միջև պետք է բնագիտական կանոններին համահունչ որոշակի օրինաչափ կապ առկա լինի: Պայմանը և հետևանքը պետք է, ըստ այս տեսության, անհրաժեշտաբար միմյանց կապակցված լինեն:

բ. Քաղաքացիական իրավունք

Քաղաքացիական իրավունքում ևս պարբերաբար կիրառվում է պատճառահետևանքային կապի ինստիտուտը՝ հատկապես դելիտկային իրավունքում, որտեղ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք գործողության/անգործության (պայման) և հասցված վնասի (արդյունքի) միջև առկա է պատճառահետևանքային կապ, թե՝ ոչ: Այստեղ ևս կիրառվում են տարբեր տեսություններ, որոնց միջոցով փորձ է արվում սահմանել պատճառահետևանքային կապ հասկացությունը, բայց միաժամանակ նաև՝ սահմանափակել այն: Սույն վերլուծության շրջանակներում կրկին կարևոր են ոչ թե առանձին տեսությունները և դրանց դրական կամ բացասական կողմերը, այլ այն, որ քաղաքացիական իրավունքում ևս խոսքը *մակրո աշխարհում* տեղի ունեցող փաստական հանգամանքների մասին է, որոնց հարաբերակցությունը պետք է պարզել:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական իրավունքում պատճառահետևանքային կապի մասին խոսելիս մենք պատկերացնում ենք իրական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը:

Վերոգրյալի հիման վրա՝ կարելի է արդեն անդրադարձ կատարել «նորմատիվ մակարդակում» պատճառահետևանքային կապին, որն ինքնին խնդրահարույց է և, ինչպես ցույց կտրվի ստորև, ավելորդ մտախաղ է ու հանգեցնում է բացասական հետևանքների՝ հատկապես Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս:

II. Պատճառահետևանքային կապը նորմատիվ մակարդակում

Ինչպես ցույց տրվեց վերոգրյալում, թե՛ փիլիսոփայությունում, թե՛ ֆիզիկայում և թե՛ իրավունքի որոշ ճյուղերում երբ խոսվում է պատճառահետևանքային կապերի մասին, նկատի է առնվում մակրո աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների միջև փոխադարձ կապը: Նշվածի լույսի ներքո հարց է առաջանում՝ որքանո՞վ է մակրո աշխարհի ֆենոմենների միջև կապը բնութագրող այս կոնցեպցիան կիրառելի նորմատիվ մակարդակում, օրինակ՝ օրենքի և Սահմանադրության հարաբերակցության շրջանակներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս 2009 թվականի նոյեմբերի 24-ի իր ՍԴՈ-839 որոշմամբ, հղում կատարելով այն ժամանակ գործող «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասին, որպես անհատական

դիմումով գործի թույլատրելիության չափանիշ սահմանել է, որ « … դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ **անմիջական պատճառահետևանքային կապ** է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև»[18] (ընդգծումը՝ հեղինակային):

Վերոնշյալ որոշումն աչքի է ընկնում նրանով, որ Սահմանադրական դատարանն անհատական դիմումը վարույթ է ընդունել և անցել դատաքննության, բայց վերջինիս ժամանակ բացահայտել է, որ բավարար չափով իրավաբանորեն չի հիմնավորվել անմիջական պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի խախտման փաստի միջև:

Դատավարական իրավունքի տեսանկյունից նման գործելաոճը համոզիչ չէ, քանի որ ստացվում է, որ Սահմանադրական դատարանն ընդունում է, որ իր դատական կազմը սխալ է գործել, երբ անհատական դիմումով գործն ընդունել է վարույթ: Թեև Սահմանադրական դատարանն իրավասու է դատաքննության ցանկացած փուլում կարճելու գործը, **եթե ի հայտ են եկել *նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ***, բայց տվյալ դեպքում նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ի հայտ գալու մասին խոսելը բացառվում է: Ասվածը փորձենք ավելի մանրամասն հիմնավորել ստորև.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝

գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝

[18] Հատկանշական է, որ այդ գործի շրջանակներում, ըստ էության, Սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը, քանի որ գտել է, որ դիմողը վիճարկում է ոչ թե օրենքի սահմանադրականությունը, այլ՝ վարչական ակտի: Միաժամանակ, սակայն, Սահմանադրական դատարանը հարկ է համարել ընդգծել, որ թե՛ վարչական մարմինը, թե՛ դատական ատյանները սխալ են գործել, երբ ելել են նրանից, որ վստահության իրավունքը ծագել է վարչական ակտից, այլ ոչ թե դատական ակտից:

1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին.

2) եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան.

3) եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում.

4) եթե դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

5) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը դադարել է, և այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

6) սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:»

Վերոնշյալ հոդվածի 1-ից 5-րդ կետերով սահմանված դեպքերը Սահմանադրական դատարանի կողմից գործի վարույթը կարճելու հարցի տեսանկյունից դիտարկելիս կարող ենք արձանագրել, որ դժվար է պատկերացնել մի դեպք, երբ Սահմանադրական դատարանն անհատական դիմումով գործը վարույթ ընդունելիս ելնի, օրինակ, նրանից, որ դիմողն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան (2-րդ կետ), այնուհետ գործի դատաքննության ընթացքում «բացահայտի», որ դիմողն իրականում իրավասու չի եղել դիմելու Սահմանադրական դատարան: Նման դեպքում պետք է ելնել այն կանխավարկածից, որ կա՛մ Սահմանադրական դատարանի 3 դատավորից բաղկացած կազմը, որը քննում է անհատական դիմումի թույլատրելիության չափանիշների առկա լինել/չլինելը, թույլ է տվել սխալ և սխալ է գնահատել դիմողի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունենալու հարցը, կա՛մ գործի դատաքննության ընթացքում Սահմանադրական դատարանը (արդեն ամբողջ կազմով) բացահայտել է *նոր կամ նոր երևան եկած հանգամանք*[19] (ինչը դատավորների կազմին հայտնի չէր դիմումը վարույթ ընդունելիս), որի հիման վրա նա իրավասու կլինի կարճելու գործի վարույթը: Ուստի կարծում ենք, որ Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը («*բացահայտել է*») և 29-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս պետք է առաջին հերթին

[19] Օրինակ՝ Սահմանադրական դատարան դիմելիս անձը եղել է օտարերկրյա քաղաքացի, բայց դատարան է ներկայացրել ՀՀ քաղաքացու կեղծ անձնագիր, որը դատարանի կազմին հայտնի չի եղել, բայց դատաքննության ընթացքում բացահայտվել է:

նկատի ունենալ այն դեպքերը, երբ գործի դատաքննության ընթացքում է միայն ի հայտ գալիս այն (նոր) հանգամանքը, որի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը կկարճի գործի վարույթը:

Իսկ ինչ վերաբերում է գործի դատաքննության փուլում իրավաբանորեն բավարար չափով անմիջական պատճառահետևանքային կապը հիմնավորած չլինելու պատճառով գործի վարույթը կարճելուն (Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, ի համակցում 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և 69-րդ հոդվածի 5-րդ մասին), ապա այն առավել անհասկանալի մոտեցում է, քանի որ պատճառահետևանքային կապ կա՛մ ի սկզբանե առկա է, կա՛մ՝ ոչ: Այն չի կարող անհատական դիմումը վարույթ ընդունելիս առկա լինել, բայց գործի դատաքննության ժամանակ՝ ոչ: Ինչ վերաբերում է «բավարար չափով իրավաբանորեն» հիմնավորելուն, ապա կրկին անհասկանալի է, թե ինչ չափանիշներով պետք է այդ հարցը գնահատվի: Կարծում ենք, որ եթե Սահմանադրական դատարանի դատավորների կազմը գտել է, որ դիմումում բավարար չափով հիմնավորվել է անմիջական պատճառահետևանքային կապը, ապա հետագայում դրան չի կարող դատարանի մնացած անդամների կողմից տրվի այլ գնահատական, ու գործը կարճվի (հատկապես հաշվի առնելով անձի՝ իրավական պետությունից բխող վստահության իրավունքը):

Վերոգրյալ խնդիրը, սակայն, էությամբ զուտ դատավարական բնույթ ունի: Էապես կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե ի վերջո ինչ է Սահմանադրական դատարանը հասկանում սույն կոնտեքստում «անմիջական պատճառահետևանքային կապ» ասելիս: Պատասխանը, ցավոք, Սահմանադրական դատարանի որևէ որոշման մեջ ապարդյուն է փնտրելը[20]: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ արդարացված կլինի ցույց տալ, թե գիտության մեջ ինչ մոտեցումներ կան այսպես կոչված «նորմատիվ մակարդակում պատճառահետևանքային կապերի» վերաբերյալ, որից հետո վերջինիս

[20] Սահմանադրական դատարանն իր 12 հուլիսի 2022 թվականի ՍԴԱՈ-126 որոշման մեջ փորձել է զարգացնել «պատճառահետևանքային կապ» հասկացությունը, որի շրջանակներում այն նկարագրել է հետևյալ կերպ. «Այլ կերպ ասած՝ **վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման**:» (ընդգծումն ըստ Սահմանադրական դատարանի): Նշվածը, սակայն, ոչ թե *սահմանում է* «անմիջական» և «պատճառահետևանքային կապ» հասկացությունների բովանդակությունը, այլ զուտ փոխարինում է այն հոմանիշով («անմիջական» և «ուղղակի»), այդպիսով կրկին բաց թողնելով այն հարցը, թե ի վերջո ինչ պետք է դրա բովանդակության ներքո հասկանալ (տե՛ս նաև սույն հոդվածի 21-րդ էջը):

լույսի ներքո կդիտարկվի Սահմանադրական դատարանի համապատասխան մոտեցումն ու կքննարկվի դրա պիտանիությունը:

1. Պատճառահետևանքային կապն ըստ Հանս Քելզենի

Ավստրիացի նշանավոր իրավաբան Հանս Քելզենը դեռևս 1960 թվականին իր «Պատճառականություն և վերագրելիություն» [13, էջ 321-333] հոդվածում քննարկել է սոցիալական (հումանիտար) գիտություններում պատճառական կապի գոյության հիմնախնդիրը: Քելզենը ցույց է տալիս, որ նախնադարում պրիմիտիվ մարդիկ աշխարհը չեն ընկալել ժամանակակից բնագիտության կանոններով, այն է՝ պատճառի և հետևանքի հարաբերակցությամբ, այլ ընկալել են ըստ երևույթների վերագրելիության [13, էջ 325]: Ըստ Քելզենի՝

«Երբ մի իրադարձություն է տեղի ունենում, որը նախնադարյան մարդու գիտակցությունը փորձում է բացատրել (և դա միայն այնպիսի իրադարձություն է, որն անմիջականորեն շոշափում է իր շահերը), ապա վերջինս չի հարցնում՝ ո՞րն է դրա պատճառը, այլ՝ ո՞վ է դրա համար պատասխանատու: Դա բնության ոչ թե պատճառահետևանքային, այլ նորմատիվ մեկնություն է...» [13, էջ 326]:

«Ոգեպաշտության [Animismus] *էությունը անձնային է. ասվածը, սակայն, բնության սոցիալ-նորմատիվային մեկնություն է, այսինքն՝ մեկնության մի ձև, որը տեղի է ունենում ոչ թե պատճառահետևանքային կապի օրենքով, այլ՝ վերագրելիության սկզբունքի միջոցով» [13, էջ 327]:*

Քելզենը վերագրելիության օրենքը սահմանում է որպես որոշակի վարքագծին, այն է՝ անիրավությանը, որոշակի հետևանքի կապակցմանը [13, էջ 325]: Ըստ նրա՝ հետևանքը վերագրվում է ոչ իրավաչափ վարքագծին, բայց ոչ իրավաչափ վարքագիծը, բնագիտության մեջ օգտագործվող տերմինի իմաստով, *պատճառ չէ* հետևանքի համար: Նա ավելի քան հավանական է համարում, որ պատճառահետևանքային կապի օրենքն առաջացել է հատուցման նորմից [13, էջ 326, 328]: Ըստ նրա՝ պատճառահետևանքային կապի սկզբունքն առաջացել է վերագրելիության սկզբունքի (վերջինիս հիմքում դրված է հատուցման օրենքը) ձևափոխման արդյունքում: «Պատճառ» բառի հունարենը՝ «αἰτία», նախկինում ունեցել է «մեղավորություն» իմաստը: «Պատճառը մեղավոր է հետևանքի առաջացման համար, պատասխանատու է հետևանքի համար, հետևանքը պատճառին այնպես է վերագրվում, ինչպես պատիժը՝ անիրավությանը»:

Որոշիչ քայլը դեպի պատճառահետևանքային կապի ժամանակակից հասկացությունն այն է, որ մարդիկ սկսել են հասկանալ, որ որոշ իրադարձություններ **անհրաժեշտաբար են տեղի ունենում՝** առանց որևէ անձի կամ վերին ուժի միջամտության:

Ըստ Քելզենի՝ պատճառահետևանքային կապի և վերագրելիության սկզբունքը կարելի է բնութագրել հետևյալ կերպ. պատճառահետևանքային սկզբունքը ենթադրում է, որ եթե Ա., ապա անհրաժեշտաբար լինելու է Բ., մինչդեռ վերագրելիության սկզբունքն ասում է, որ եթե Ա., ապա պետք է լինի Բ. (բայց այնպես չէ, որ այն անհրաժեշտաբար լինելու է)[21]:

Քելզենն ամփոփում է՝ եզրակացնելով, որ «վերագրելիությունը նորմատիվ հասարակական գիտությունների ոլորտում իրականացնում է այն ֆունկցիան, ինչ պատճառահետևանքային կապը՝ բնական գիտություններում» [13, էջ 326]:

Վերոգրյալի հիման վրա կարելի է ասել, որ իրավունքի տեսությունում (համենայն դեպս՝ պոզիտիվ իրավունքում, ի տարբերություն բնական, օրինակ՝ աստվածային իրավունքի) նորմատիվային մակարդակում պատճառահետևանքային կապի մասին խոսելը ճիշտ չէ: Խոսքը տարբեր աշխարհների մասին է, ու պետք չէ փորձել բնագիտական տերմինաբանությունը կիրառել նորմատիվ-հասարակական գիտություններում:

2. Նորմատիվային պատճառական կապն ըստ Ստանիսլավ Էրլիխի.

Ստանիսլավ Էրլիխը, ով, որքան որ թերևս տեսանելի է, այն քիչ հեղինակներից է, որ գրել է նորմատիվային պատճառահետևանքային կապերի մասին [19, էջեր 32-52], որոշ առումներով համամիտ չէ Քելզենի մոտեցմանը[22] [4, էջ 44], սակայն, մյուս կողմից, ընդունում է, որ բնագիտական իմաստով «պատճառահետևանքային կապ»

---

[21] Օրինակ՝ Քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով: Քրեական օրենսգրքի սույն հոդվածից պատճառահետևանքային կապի իմաստով անհրաժեշտաբար չի հետևում, որ եթե Ա.-ն սպանեց Բ.-ին, ապա Ա.-ն անհրաժեշտաբար պատժվում է (պատկերացնենք Ա.-ն դրանից հետո հաջողությամբ, առանց որևէ հետք թողնելու փախչում է երկրից և նրան այլևս չեն գտնում), այն զուտ այն, որ Ա.-ն **պետք է պատժվի**:

[22] Տե՛ս *Stanislaw Ehrlich*, նույն տեղում, էջ 44, որտեղ նրա խնդիրը Քելզենի հետ այն է, որ ըստ Էրլիխի՝ առանց պատճառահետևանքային սկզբունքի դժվար է պատկերացնել թե՛ իրավունքի ձևավորումը (օրինակ՝ օրենքի ընդունումը), թե՛ դրա կիրառումը (օրինակ՝ դատական ակտի կայացումը): Նշվածի շրջանակներում թե որքանով կարելի է պատգամավորի քվեարկությունը դիտարկել պատճառահետևանքային՝ օրենքի ընդունման համար, կարելի է այստեղ բաց թողնել:

կատեգորիան չի կարելի առանց որևէ հավելումների կիրառել հասարակական ֆենոմենների վրա [4, էջ 50]:

Ստանիսլավ Էրլիխը, ցավոք, թեև մի կողմից անձամբ պնդում է, որ անհրաժեշտ է հստակ սահմանել, թե ինչ պետք է հասկանալ «նորմատիվային պատճառահետևանքային կապ» հասկացության ներքո [4, էջ 45], մյուս կողմից, սակայն, հստակ սահմանում չի տալիս, այլ քննարկում է պատճառահետևանքային կապերի տարբեր պրոցեսներ, որոնք են իրավունքի ստեղծման բնագավառում պատճառահետևանքային կապը (causation in law) և պատճառահետևանքային կապը դատավորի կողմից նորմատիվ-իրավական պնդումների շրջանակներում: Դրանց է ավելանում նաև պատճառահետևանքային կապը դատավորական նախադեպային իրավունքում, որտեղ մի կողմից դատավորը կիրառում է իրավունքը, մյուս կողմից՝ ստեղծում: Նկարագրված բոլոր դեպքում, իհարկե, կարելի է քննարկել այս կամ այն **գործողության** պատճառահետևանքային կապն արդյունքի նկատմամբ (օրինակ՝ դատավորի վճիռը և մեղադրյալի ազատազրկումը): Դրանով, սակայն, մենք կգանք կրկին փաստական հանգամանքների դաշտ, որտեղ կրկին խոսքը բնագիտական իմաստով պատճառահետևանքային կապի մասին է [4, էջ 45]: Այդպիսով՝ բաց է մնում այն հարցը, թե, առհասարակ, արդյո՞ք երկու իրավական նորմերի միջև հնարավոր է հիմնավորել (անմիջական) պատճառահետևանքային կապ: Այս հարցը ստորև կքննարկվի հե՛նց Սահմանադրական դատարանի կողմից սահմանված անհատական դիմումների թույլատրելիության համար չափանիշ հանդիսացող «վիճարկվող օրինադրույթի և հիմնական իրավունքի խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի» շրջանակներում:

3. Օրենքի և Սահմանադրության միջև անմիջական պատճառահետևանքային կապ.

Ինչպես ցույց տրվեց վերոգրյալում, պատճառահետևանքային կապ հասկացությունն ինքնին բավականին խնդրահարույց է, երբ փորձ է արվում դրանով հիմնավորել նորմատիվային պրոցեսներ: Սահմանադրական դատարանը ևս առատորեն օգտվում է հիմնավորման այս մեխանիզմից՝ առանց սահմանելու, թե ինչ պետք է հասկանալ «անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացության ներքո:

Սահմանադրական դատարանը, որպես կանոն, սահմանափակվում է հետևյալ, կարելի է ասել, շաբլոնային տեքստով.

*«… անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և **հիմնավորի** վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության **անմիջական պատճառահետևանքային կապը**: Այլ կերպ ասած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է **ուղղակիորեն** հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման:*

*Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ **առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ բավարար հիմնավորումներ**:»*[23] (մգացումներն ըստ հեղինակի):

Սահմանադրական դատարանի վերոնշյալ պրակտիկան սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարական իրավունքի տեսանկյունից խիստ խնդրահարույց է ու այդպիսով՝ համոզիչ չէ: Նախ և առաջ պարզ չէ, թե ինչ է նշանակում «հիմնավորի … անմիջական պատճառահետևանքային կապը»: Երկու նորմերի միջև, որոնք գտնվում են նորմերի աստիճանակարգությունում տարբեր հարթությունների վրա, չեն կարող գոյություն ունենալ պատճառահետևանքային կապեր[24]: Առավելագույնը, որի

[23] Տե՛ս 12 հուլիսի 2022 թվականի ՍԴԱՈ-126

[24] Որպես միակ բացառություն՝ թերևս կարելի է դիտարկել այն դեպքը, երբ մի նորմը հրահանգում է մեկ այլ նորմի իրավաբանական ուժը կորցնելը: Այդ դեպքում կարելի է խոսել հրահանգող նորմի և

մասին կարելի է այս կոնտեքստում խոսել, դա երկու նորմերի միջև բովանդակային հակասությունն է[25]:

Բացի վերոնշյալից՝ անհասկանալի է նաև, թե ինչ է նշանակում «անմիջական» եզրույթն այս կոնտեքստում: Գոյություն ունի կարծիք՝ ըստ որի «անմիջական» եզրույթն ընկալվում է այն իմաստով, որ օրենքն ինքնին պետք է հանգեցնի հիմնական իրավունքի խախտման՝ առանց որևէ այլ իրավական ակտով կոնկրետացվելու, որի արդյունքում կստացվի, որ որևէ անհատական դիմում թույլատրելի չի լինի, քանի որ օրենքը պետք է ինչ-որ ձև կիրառված լինի անձի նկատմամբ, որպեսզի վերջինս էլ սպառի ներպետական դատական ատյանները և դիմի Սահմանադրական դատարան [9, էջ 150-151]:

Հատկապես հաշվի առնելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման փաստական հանգամանքները՝ չենք կարծում, որ Սահմանադրական դատարանն այդ իմաստով նկատի ունի «անմիջական» եզրույթը, ինչպես այն ընկալում և քննադատվում է վերը ներկայացված կարծիքում: Միևնույն ժամանակ, այնուամենայնիվ, բաց է մնում այն հարցը, թե ինչպես պետք է հասկանալ «անմիջական» եզրույթը: Հաշվի առնելով ՍԴՈ-839 որոշումը՝ կարելի է ենթադրել, որ Սահմանադրական դատարանի խնդիրն այն ժամանակ եղել է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննության առարկա կարող է լինել բացառապես օրենքը, բայց ոչ անհատական բնույթի իրավական ակտը (ինչպիսին են տվյալ գործում խնդրահարույց վարչական ու դատական ակտերը): Այսինքն՝ ենթադրաբար, Սահմանադրական դատարանը զուտ նկատի է ունեցել, որ օրենքը կոնկրետացնող անհատական իրավական ակտերը չեն կարող լինել Սահմանադրական դատարանում

իրավաբանական ուժը կորցնող նորմի միջև անմիջական պատճառահետևանքային կապի մասին, բայց, այնուամենայնիվ, այդ մոտեցման «ավելացած արժեքը» տեսանելի չէ:

[25] Օրինակ՝ x օրենքի 1-ին հոդվածում ամրագրվում է, որ «Հանրային իշխանության գործողությունները քննադատող բոլոր հավաքներն արգելվում են»: Ակնհայտ է, որ նման օրենքը սահմանափակում է անձանց հավաքների ազատությունը և այդպիսով միջամտում դրանով պաշտպանվող բարիքին: Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք: Այս երկու նորմերը, (արգելվում է հավաք անցկացնել vs. թույլատրվում է հավաք անցկացնել) լեզվական ու տրամաբանական կանոնների համաձայն, հակադրվում են միմյանց, որի արդյունքում առաջանում է հակասություն, որն իրավունքում պետք է լուծվի lex superiori կանոնի հիման վրա (ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմը վերացնում է ավելի ցածրը), բայց այդ հակասությունը **չի ստեղծում պատճառահետևանքային կապեր**:

քննության առարկա: Այդ դեպքում, սակայն, «անմիջական պատճառահետևանքային կապի» մտավարժանքն ավելորդ է: Կարելի է զուտ արձանագրել, որ դիմումում ոչ թե օրենքի սահմանադրականության, այլ անհատական իրավական ակտի հարց է առաջադրվում, ինչը դուրս է Սահմանադրական դատարանի վերահսկողությունից (անհատական դիմումի հիման վրա քննվող գործի շրջանակներում):

Վերոգրյալից զատ, ինչ վերաբերում է «անմիջական պատճառահետևանքային կապը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորելուն», ապա էլ ավելի անհասկանալի է նման պնդումը, քանի որ տրամաբանորեն անմիջական պատճառահետևանքային կապ կա՛մ առկա է, կա՛մ առկա չէ: Այն հնարավոր չէ «բավարար չափով իրավաբանորեն հիմնավորել»: Այստեղ ևս, ենթադրաբար, Սահմանադրական դատարանը նկատի ունի, որ անհատական դիմումում պետք է բերվեն բավարար հիմնավորումներ, այն է՝ ներկայացնել, թե ինչ է տեղի ունեցել, ինչ նորմատիվ իրավական ակտ է անձի նկատմամբ կիրառվել, հիմնական իրավունքներով երաշխավորված ինչ բարիքներ[26] են խաթարվել այդ նորմատիվ իրավական ակտով, ներկայացնել հիմնական իրավունքի բովանդակությունը, դրա սահմանափակումը[27]:

---

[26] «Հիմնական իրավունքի սահմանափակում» և «հիմնական իրավունքով երաշխավորված բարիքի սահմանափակում» եզրույթների միջև տարբերությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս Պողոսյան Ա. Հիմնական իրավունքները, պաշտպանության ոլորտները և սահմանափակումները // Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Երևան, 2024, էջ 22, ենթագլուխ 1.3.2: Գերմանական գրականությունից տե՛ս Jürgen Schwabe, Probleme der Grundrechtsdogmatik, 1977, էջ 73: Փորձենք հակիրճ ներկայացնել «հիմնական իրավունքի սահմանափակում» եզրույթի սահմանադրա-դոգմատիկ հիմնախնդիրը: Հիմնական իրավունքներ ասելիս հասկանում ենք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մի շարք նորմատիվ դրույթներ: Այդ դրույթները պաշտպանում են որոշակի բարիքներ, օրինակ՝ կարծիքի ազատ արտահայտումը կամ բնակարանի անձեռնմխելիությունը: «Բարիք» եզրույթն օգտագործվում է փաստացի երևույթներ նկարագրելու համար: Օրինակ՝ երբ Ա.-ն սոցիալական ցանցում հրապարակում է կարծիք, որով պնդում է, որ «Հայաստանին արտաքին վտանգ է սպառնում», ապա Ա.-ի այդ պնդումը, որպես փաստացի կատարված գործողություն, այն ***բարիքն*** է, որը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով: Նշվածի հաշվառմամբ, եթե դիտարկում ենք «հիմնական իրավունքի սահմանափակում» հասկացությունը, ապա պարզ է դառնում, որ սահմանափակվում է ոչ թե հիմնական իրավունքը՝ որպես **<u>նորմատիվ դրույթ</u>**, այլ դրանով պաշտպանվող բարիքը: Այնուամենայնիվ, լեզվական առումով և Սահմանադրության տեքստի հաշվառմամբ ավելի պրակտիկ է խոսել «հիմնական իրավունքի սահմանափակման» մասին, բայց *սահմանադրական իրավունքի դոգմատիկայի տեսանկյունից* ընկալել այն որպես «հիմնական իրավունքով երաշխավորված բարիքի սահմանափակում»:

[27] Կարծում ենք, որ սահմանափակման արդարացված **չլինելու** հիմնավորումներ անձը պարտավոր չէ բերել: Սահմանադրական դատարանը, երբ եզրահանգում է, որ հիմնական իրավունք է սահմանափակվել և գործն ընդունում է քննության, ապա նա ex officio պարտավոր է պարզել, թե արդյոք սահմանափակումն արդարացված է, թե՝ ոչ: Անձի վրա չի կարող դրվել բեռ՝ ապացուցելու, որ իր հիմնական իրավունքի նկատմամբ տեղի ունեցած սահմանափակումն արդարացված չէ: պ նդումը, որ իր հիմնական իրավունքը սահմանափակվել է և դրա արդյունքում խախտվել է հիմնական իրավունքը, բավարար է:

Սահմանադրական դատարանի պրակտիկան[28] գնացել է այն ուղղությամբ, որ, անկախ նրանից, թե դիմող կողմն ինչ հիմնավորումներ է ներկայացնում անհատական դիմումում, Սահմանադրական դատարանը մշտապես կարող է զուտ արձանագրել, որ չի տեսնում անմիջական պատճառահետևանքային կապը հիմնական իրավունքի խախտման փաստի և վիճարկվող օրինադրույթի հակասահմանադրականության միջև, կամ արձանագրել, որ դիմող կողմը «բավարար չափով իրավաբանորեն» չի հիմնավորել հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի և օրինադրույթի հակասահմանադրականության միջև անմիջական պատճառահետևանքային կապը:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ, առհասարակ, նորմատիվ մակարդակում (այդ թվում՝ օրենք և Սահմանադրություն հարաբերություններում) պատճառահետևանքային կապերի մասին խոսելը տեղին չէ: Պետք չէ բնագիտության տերմիններն օգտագործել նորմատիվ կապակցվածություններ բացատրելու համար: Սահմանադրական իրավունքի դոգմատիկան ունի բավարար գործիքակազմ, որով հնարավոր է սահմանել անհատական դիմումով գործը վարույթ ընդունելու թույլատրելիության հստակ չափանիշներ:

III. Առաջարկվող լուծում

Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս «Անմիջական պատճառահետևանքային կապ» հասկացությունից պետք է հրաժարվել: Դրա փոխարեն առաջարկվում է կիրառել հե՛նց Սահմանադրության մեջ օգտագործվող տերմինը՝ փոքր-ինչ լրացմամբ, այն է՝ «հիմնական իրավունքի հնարավոր

---

[28] Տե՛ս 17.05.2009 թ. **ՍԴԱՈ-21**, 08.12.2020 թ. **ՍԴԱՈ-242**, 29.12.2020 թ. **ՍԴԱՈ-244**, 29.12.2020 թ. **ՍԴԱՈ-248**, 16.04.2021 թ. **ՍԴԱՈ-79**, 14.05.2021 թ. **ՍԴԱՈ-100** (ՍԴԱՈ-100 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նույնիսկ պնդում է հետևյալը. «Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ թեև դրանում առաջադրված հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումը բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորված չէ:»), 02.09.2021 թ. **ՍԴԱՈ-181**, 02.09.2021 թ. **ՍԴԱՈ-182**, 28.09.2021 թ. **ՍԴԱՈ-199,** 15.10.2021 թ. **ՍԴԱՈ-204**, 15.02.2022 թ. **ՍԴԱՈ-28**, 07.06.2022 թ. **ՍԴԱՈ-97**, 27.06.2023 թ. **ՍԴԱՈ-71** (մասնավորապես՝ էջ 21 և հաջորդող էջեր), 27.06.2023 թ. **ՍԴԱՈ-70,** 01.08.2023 թ. **ՍԴԱՈ-87,** 05.03.2024 թ. **ՍԴԱՈ-40**, 21.05.2024 թ. **ՍԴԱՈ-88,** 31.05.2024 թ. **ՍԴԱՈ-89**, 18.06.2024 թ. **ՍԴԱՈ-101,** 01.10.2024 թ. **ՍԴԱՈ-146**, 05.11.2024 թ. **ՍԴԱՈ-171**, 10.12.2024 թ. **ՍԴԱՈ-188,** 10.12.2024 թ. **ՍԴԱՈ-186**, 17.12.2024 թ. **ՍԴԱՈ-192**: Նշված բոլոր աշխատակարգային որոշումներով Սահմանադրական դատարանի կազմը սկզբից անհատական դիմումով գործն ընդունել է քննության (ենթադրաբար դիմումը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորված համարելով), իսկ դատաքննության ժամանակ Սահմանադրական դատարանը «բացահայտել է», որ բավարար չափով իրավաբանորեն հիմնավորումներ չեն ներկայացվել վիճարկվող օրինադրույթի և դիմողի իրավունքների խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

խախտում» բառակապակցությունը: Արդյո՞ք հիմնական իրավունքի հնարավոր խախտում առկա է, թե՝ ոչ, կարելի է պարզել միայն նրանով, երբ ստուգվի՝ արդյո՞ք հիմնական իրավունքի խախտումն ի սկզբանե բացառված է[29] [16, էջ 46]: Այսինքն՝ վիճարկվող նորմի հակասահմանադրականության պարագայում պետք է բացառված չլինի հիմնական իրավունքի խախտման **հնարավորությունը** [16, էջ 46-47]:

Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործի քննության թույլատրելիության չափանիշ հանդիսացող «անմիջական պատճառահետևանքային կապ» անորոշ բառակապակցությունը, ըստ էության, թույլ է տալիս Սահմանադրական դատարանին ցանկացած անհատական դիմումի պարագայում կա՛մ պնդել, որ չի տեսնում այդ կապը, կա՛մ պնդել, որ դիմող կողմը «բավարար չափով» իրավաբանորեն չի հիմնավորել վերջինիս առկայությունը: Երկու դեպքում էլ տուժում է սահմանադրական արդարադատություն որոնող անձը: Ուստի անհրաժեշտ է սահմանադրական դատավարության դոգմատիկայի տեսանկյունից վերանայել այս մոտեցումը և սահմանել այնպիսի չափանիշներ, որոնց հիման վրա անձն ի վիճակի կլինի քիչ թե շատ վստահություն ունենալ, որ իր կողմից Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումը կընդունվի վարույթ:

3. Եզրակացություն.

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ «պատճառահետևանքային կապ» հասկացությունը նորմատիվ մակարդակում տեղ չունի: Այս սկզբունքը կիրառվում է մակրո աշխարհում իրավիճակների միջև փոխկապակցվածությունը նկարագրելու համար, որը, սակայն, ինքնին աքսիոմատիկ չէ և գիտության տարբեր ճյուղերում ենթարկվել և ենթարկվում է խիստ քննադատության (տե՛ս, օրինակ, Հյումի մոտեցումը

[29] Որպես «ակնհայտ բացառված» լինելու պատկերավոր օրինակ՝ քննարկենք հետևյալ դեպքը. Ա.-ն զբոսնում է երևանյան փողոցներով: Թումանյան/Ամիրյան խաչմերուկում նա պատահաբար հայտնվում է դադարեցված և արդեն ուժի կիրառման միջոցով ցրվող հավաքում: Ուժ է կիրառվում նաև Ա.-ի նկատմամբ: Ակնհայտ է, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, որը լիազորում է Ոստիկանությանն անհրաժեշտության դեպքում կիրառելու նաև ուժ, չի սահմանափակում տվյալ դեպքում Ա.-ի՝ Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատության իրավունքը, քանի որ Ա.-ն հավաքի մասնակից չէ: Կարելի է քննարկել տվյալ դեպքում Ա.-ի՝ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտման հարցը, բայց ոչ՝ հավաքների: Ուստի, եթե Ա.-ն, ներպետական ատյանները սպառելուց հետո դիմեր Սահմանադրական դատարան և վիճարկեր «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթը, ապա Սահմանադրական դատարանն իրավացիորեն կարող էր մերժել գործի քննությունը, քանի որ ի սկզբանե բացառված է, որ Ա.-ի՝ Սահմանադրության 44-րդ հոդվածով երաշխավորված հավաքների ազատությունը կարող է սահմանափակված լինել:

I. 1. ներքո կամ քվանտային ֆիզիկայում առհասարակ պատճառահետևանքային կապերի հերքումը I. 2. ներքո):

Սահմանադրական դատարանի կողմից մշակված անհատական դիմումով գործերի թույլատրելիության համար չափանիշ հանդիսացող դոգմատիկ այս ֆիգուրը համոզիչ չէ և կարիք ունի հիմնային վերանայման: Անհատական դիմումի թույլատրելիությունն ստուգելիս Սահմանադրական դատարանը, ի թիվ այլնի, սույն հոդվածի շրջանակներում քննարկվող հարցի տեսանկյունից պետք է ստուգի՝ արդյո՞ք բացառված չէ դիմողի հիմնական իրավունքի խախտված լինելը: Եթե Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ խախտումը բացառված չէ, ապա դիմումը պետք է ընդունել վարույթ և կայացնել ըստ էության որոշում: Սահմանադրական դատարանի ներկայիս պրակտիկան համոզիչ չէ և կարող է դիտարկվել չափազանց սուբյեկտիվ-հայեցողական, որի արդյունքում տուժում է սահմանադրական արդարադատություն որոնող անձը:

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումով գործը վարույթ ընդունելու ժամանակ կիրառվող «անմիջական պատճառահետևանքային կապ» ինստիտուտը, որի շրջանակներում առանձին անդրադարձ է կատարվում «պատճառահետևանքային կապ» հասկացության պատմական զարգացմանը, այդ թվում՝ փիլիսոփայության, ֆիզիկայի և իրավունքի ոլորտներում: Որպես հիմնական թեզ՝ ներկայացվում է այն մոտեցումը, որ տարբեր նորմատիվային մակարդակներում գտնվող նորմերի պարագայում «(անմիջական) պատճառահետևանքային կապերի» մասին խոսելը համոզիչ չէ: Նորմերի միջև, որպես այդպիսին, պատճառահետևանքային կապեր չեն լինում: Հետևաբար, համոզիչ չէ Սահմանադրական դատարանի կողմից առաջադրված այն պահանջը, որ պետք է դիմողը բավարար չափով իրավաբանորեն հիմնավորի հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի և վիճարկվող օրինադրույթի միջև անմիջական պատճառահետևանքային կապը: Բացի այդ, չափազանց խնդրահարույց է Սահմանադրական դատարանի պրակտիկան առ այն, որ անհատական դիմումով գործն սկզբից ընդունում է քննության, իսկ հետո՝ դատաքննության փուլում, գործի վարույթը կարճում՝ պատճառաբանելով, որ «բացահայտել է», որ դիմողը բավարար չափով իրավաբանորեն չի հիմնավորել հիմնական իրավունքի խախտման ենթադրյալ փաստի

և վիճարկվող օրինադրույթի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը:

Առաջարկվում է այն փոխարինել հիմնական իրավունքի խախտման բացառման դոգմատիկ ֆիգուրով, որի շրջանակներում Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնա այն հարցին, թե արդյոք հիմնական իրավունքով պաշտպանվող բարիքն առերևույթ սահմանափակվել է, թե՝ ոչ:

Հիմնաբառեր՝ Սահմանադրական դատարան, անմիջական պատճառահետևանքային կապ, հիմնական իրավունքներ, անհատական գանգատ, նորմատիվ մակարդակ, նորմատիվային պատճառահետևանքային կապ, հիմնական իրավունքի առերևույթ սահմանափակում:

THE CONCEPT OF “DIRECT CAUSAL LINK” IN THE PRACTICE OF THE CONSTITUTIONAL COURT AND THE ISSUES ASSOCIATED WITH IT

POGHOSYAN ASHOT
Attorney-at-Law, PhD Candidate at the University of Bonn

Abstract. The article discusses the **"direct causal link"** doctrine applied by the Constitutional Court of Armenia when admitting cases based on individual applications. Within this framework, particular attention is given to the **historical development** of the concept of **causality**, including its evolution in **philosophy, physics, and law**.

The main thesis presented is that when dealing with norms situated at different **normative levels**, the notion of **"(direct) causal links"** is unconvincing. There are no causal relationships between legal norms as such. Therefore, the requirement put forward by the Constitutional Court that the applicant must sufficiently substantiate in legal terms the existence of a direct causal link between the alleged violation of a fundamental right and the contested legal provision is unconvincing. Moreover, the Court’s practice is particularly problematic when it accepts a case for examination based on an individual application, but later discontinues the proceedings at the adjudication stage, justifying this by stating that it has "revealed" the applicant failed to sufficiently substantiate in legal terms the existence of a direct causal connection between the alleged fundamental rights violation and the contested provision.

Instead, the article proposes replacing this approach with the **dogmatic figure of fundamental rights infringement exclusion**. Under this framework, the Constitutional Court should focus on determining whether the **good protected by a fundamental right has been prima facie restricted or not**.

Keywords: Constitutional Court, direct causal link, fundamental rights, individual complaint, normative level, normative causality, prima facie restriction of a fundamental right.

ПОНЯТИЕ «НЕПОСРЕДСТВЕННОЙ ПРИЧИННО-СЛЕДСТВЕННОЙ СВЯЗИ» В ПРАКТИКЕ КОНСТИТУЦИОННОГО СУДА И СВЯЗАННЫЕ С НИМ ПРОБЛЕМЫ

ПОГОСЯН АШОТ
Адвокат, аспирант Боннского университета

Аннотация. В статье обсуждается институт «непосредственной причинно-следственной связи», применяемый Конституционным судом РА при принятии дела к производству по индивидуальному заявлению, в рамках которого отдельно рассматривается историческое развитие понятия «причинно-следственная связь», в том числе в сферах философии, физики и права. В качестве основного тезиса представлен подход, согласно которому в случае норм, находящихся на разных нормативных уровнях, говорить о «(прямых) причинно-следственных связях» неубедительно. Причинно-следственных связей как таковых между нормами не существует, кроме того, крайне проблематична практика Конституционного суда в отношении того, что по индивидуальному заявлению дело сначала принимается к рассмотрению, а затем, на этапе судебного разбирательства, прекращается производство по делу на том основании, что оно «выявило» непосредственную причинно-следственную связь между предполагаемым фактом нарушения основного права и оспариваемым законом, что Заявитель недостаточно юридически обосновал наличие прямой причинно-следственной связи между предполагаемым фактом нарушения основного права и оспариваемым законопроектом.

Предлагается заменить его догматической фигурой исключения нарушения основного права, в рамках которой Конституционный суд должен рассмотреть вопрос о том, было ли ограничено благо, защищаемое основным правом, или нет.

Ключевые слова: Конституционный суд, прямая причинно-следственная связь, основные права, индивидуальная жалоба, нормативный уровень, нормативно-причинная связь, кажущееся ограничение основного права.

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աղայան, Էդուարդ**, «Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան 1976, 1618 էջ.
2. **Aristoteles**, Physik, Berliner Ausgabe, Holzinger Verlag 2013, http://www.zeno.org/Philosophie/M/Aristoteles/Physik/2.+Buch/3.+Capitel (վերջին մուտք՝ 05.06.2026թ.) 231 էջ.
3. **Beauchamp, Tom L.**; Norton, David Fate; Stewart, M. A. (General Editors): David Hume, A Treatise of Human Nature, Volume 1, The Clarendon Edition of the Works of David Hume, Oxford 2006, 431 էջ.
4. **Ehrlich, Stanislaw**, Von der normativen Kausalität in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, 1986, Vol 72 No. 1 (1986), էջեր 32-52.
5. **Frisch**, Wolfgang, Objektive Zurechnung des Erfolgs - Entwicklung, Grundlinien und offene Fragen der Lehre von der Erfolgszurechnung, Juristische Schulung (ամսագիր) 2011, էջեր 19-24.
6. **Heinrich, Bernd**, Strafrecht Allgemeiner Teil, 7. Auflage, Kohlhammer Verlag 2022, 749 էջ.
7. **Heisenberg, W.** (1930). The Physical Principles of the Quantum Theory. University of Chicago Press, 198 էջ.
8. **Höffe, Otfried**, Immanuel Kant, 8. Auflage, C. H. Beck Verlag 2014, 341 էջ.
9. **Hovhannisyan, Gor**, Vergleich zwischen der deutschen Verfassungsbeschwerde und dem armenischen Individualantrag: Eine rechtsvergleichende Analyse unter besonderer Berücksichtigung der Zulässigkeitsvoraussetzungen und Entscheidungswirkungen, 334 էջ.
10. **Hume, David**, Eine Untersuchung über den menschlichen Verstand, Felix Meiner Verlag Hamburg, 2., korrigierte Auflage, 202 էջ.
11. **Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան:** Երևան, 2024, 492 էջ.
12. **Kant, Immanuel**, Kritik der reinen Vernunft, 1967, Unveränderter Neudruck der von Raymund Schmidt besorgten Ausgabe (nach der zweiten durchgesehenen Auflage von 1930), Felix Meiner Verlag, 766 էջ.
13. **Kelsen, Hans**, Kausalität und Zurechnung, in: Archiv für Rechts- und Sozialphilosophie, 1960, Vol. 46, No. 3 (1960), էջեր 321-333.
14. **Marciano, Laura**, „Die Vorsokratiker. Band 1: Thales, Anaximander, Anaximenes, Pythagoras und die pythagoreer, Xenophanes, Heraklit“, Artemis & Winkler Verlag 2007, 480 էջ.
15. **Oreshkov, O.**; Costa, F.; Brukner, Č., Quantum correlations with no causal order. Nat Commun 3, 1092 (2012), link: https://www.nature.com/articles/ncomms2076, (վերջին մուտք՝ 29.05.2024թ.).
16. **Պողոսյան, Վարդան**; Սարգսյան, Նորա; Օդաբաշյան, Հովհաննես, Անհատական գանգատ (գիտագործնական ձեռնարկ), Երևան 2023, 174 էջ.
17. **Prechtl, Peter**; Burkard, Franz-Peter (Hrsg.), Metzler Lexikon Philosophie, 3. Auflage, J.B. Metzler Verlag 2008, 616 էջ.
18. **Quantenmechanik für Naturwissenschaftler: Ein Lehr- und Übungsbuch mit zahlreichen Aufgaben und Lösungen** 2. Auflage, Springer Spektrum Verlag 2022 (Martin O. Steinhauser), 692 էջ.
19. **Rengier, Rudolf**, Strafrecht Allgemeiner Teil, 14. Auflage, C. H. Beck Verlag 2022, 654 էջ.
20. **Roxin, Claus**; Greco, Luis, Strafrecht Allgemeiner Teil, 5. Auflage, C. H. Beck Verlag 2020, 1249 էջ.
21. **Schwabe, Jürgen**, Probleme der Grundrechtsdogmatik, Darmstadt 1977, 482 էջ.